ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ
ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

3104 , Գյումրի, Վարդանանց հրապարակ 1
Հեռ. (+374 312) 2-22-00; Ֆաքս (+374 312) 3-26-06
Էլ. փոստ gyumri@gyumri.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

«30» ապրիլի 2015 թվական N 55–Ն

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ԱՆԻ ԹԱՂԱՄԱՍԻ 11-ՐԴ ՓՈՂՈՑԻ N 10/5 ՀԱՍՑԵԻ ԱՆԱՎԱՐՏ ՇԵՆՔԸ ԱՃՈՒՐԴԱՅԻՆ ԿԱՐԳՈՎ ՕՏԱՐԵԼՈՒ ԵՎ ԱՃՈՒՐԴԻ ՄԵԿՆԱՐԿԱՅԻՆ ԳԻՆ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Նկատի ունենալով, որ Գյումրի համայնքի սեփականություն հանդիսացող Անի թաղամասի 11-րդ փողոցի N 10/5 հասցեի անավարտ շենքը (հիմք՝ անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման N 03042015-08-0015 վկայական) չի օգտագործվում համայնքի կարիքների համար և ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 1-ին մասի 20-րդ կետով՝ **համայնքի ավագանին որոշում է.**

1. Թույլատրել Գյումրի համայնքի սեփականություն հանդիսացող Անի թաղամասի 11-րդ փողոցի N 10/5 հասցեի 297,47 (երկու հարյուր իննսունյոթ ամբողջ քառասունյոթ հարյուրերորդական) քառակուսի մետր մակերեսով անավարտ շենքը և կառուցապատման ու սպասարկման համար զբաղեցրած 481,0 (չորս հարյուր ութսունմեկ) քառակուսի մետր մակերեսով հողամասը, օտարել աճուրդային կարգով:
2. Ելնելով <<Պ.Ա.Գ. Էսթեյթ>> սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության կողմից 2015 թվականի ապրիլի 20-ի թիվ-056 հաշվետվության եզրակացությամբ գնահատված շուկայական արժեքից՝ 297,47 (երկու հարյուր իննսունյոթ ամբողջ քառասունյոթ հարյուրերորդական) քառակուսի մետր մակերեսով անավարտ շենքը և կառուցապատման ու սպասարկման համար զբաղեցրած 481,0 (չորս հարյուր ութսունմեկ) քառակուսի մետր մակերեսով հողամասի համար օտարման մեկնարկային գին հաստատել 2.000.000 (երկու միլիոն) Հայաստանի Հանրապետության դրամը:

Կողմ (14) **Դեմ (0)** **Ձեռնպահ(0)**

Ա.Ադամյան
Ա.Բաղրամյան
Ա.Գրիգորյան
Վ.Եդիգարյան
Գ.Թաթարյան
Հ.Խաչատրյան
Հ.Կարապետյան
Տ.Հովհաննիսյան
Ն.Մեսրոպյան
Ռ.Մխիթարյան
Է.Մկրտչյան
Վ.Շիրինյան
Ե.Պողոսյան
Մ.Սահակյան

Ս. Բ Ա Լ Ա Ս Ա Ն Յ Ա Ն

ԻՍԿԱԿԱՆԻ ՀԵՏ ՃԻՇՏ Է՝
ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՔԱՐՏՈՒՂԱՐ՝ **Ռ. ԱՍԱՏՐՅԱՆ**

30 ապրիլի 2015թ.
ք.Գյումրի